

ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ*

1216 թվականին, ինչպես արդեն ասացինք, Աղթամարում եպիսկոպոս էր ձեռնադրվել և Տաթևում ինքնուրույն Աթոռ հաստատել Տեր Հովհաննեսը՝ Ստեփանոս Գ-ի հորեղբորորդին[79], որը Սյունյաց աթոռակալների շարքում Հովհաննես անունով ութերորդ եպիսկոպոսն է: Ինչպես տեսանք, բաժանումից հետո Սարգիս Ա-ը որպես Ամաղու Նորավանքի վիճակ հաստատել էր միայն Վայոց ձորի, Նախիջևանի ու Ծաղուկի թեմերը, իսկ մնացած շուրջ ինը թեմերը գտնվում էին Տաթևի իշխանության ներքո: Ասացինք նաև, որ տեղական հայ և վրաց իշխողները և Կոնստանդին Բարձրբերդցին վավերացրել էին այս նոր վիճակը, այսպիսով լռելյան կերպով ընդունելով նաև Տաթևի անջատված Աթոռի գոյության փաստը, որով և բավարարվում է Հովհաննես Ը-ը և մեկնելով Աղթամարից, հանդես է գալիս որպես «ճանաչում գտած» Աթոռի օրինական ու անկախ աթոռակալ: Սա հնարավորություն է տալիս Հովհաննեսին ձեռնամուխ լինելու երկրաշարժից ավերված Տաթևի եկեղեցիների վերակառուցմանը: Սակայն շուտով, 1225 թվականին Ատրպատականից Հայաստան են ներխուժում Զալալեդդինի զորքերը և շուրջ յոթ տարի ավերածություններ գործում[80]: «...յոր տեղ և հասանէր՝ աւերէր, գերիւէր, ապականէր ոչ խնայելով ի մարդ կամ յանասուն»[81],—գրում է պատմիչը: Զալալեդդինին կրնկակոխ հետևող մոնղոլական հորդաները նախ պարտության են մատնում նրան, ապա սկսում մեկը մյուսի ետևից գրավել Հայաստանի իշխանությունները: 1236 թվականին գրավվում է և Սյունիքը[82]: Այս ասպատակություններն ու նվաճողների հարկային ծանր քաղաքականությունը Հովհաննես եպիսկոպոսին հնարավորություն չեն տալիս ավարտելու Տաթևի վերանորոգումները:

Սակայն շուտով նորից բարելավվում է Սյունիքի քաղաքական վիճակը՝ շնորհիվ Սմբատ Օրբելյանի շրջահայաց ձեռնարկումների: Նա երկու անգամ՝ 1251 և 1256 թվականներին այցելում է Կարակորում՝ Մանգու խանի մոտ[83], և ձեռք բերում «ենջուական» իրավունք, նշանակվելով առանձին միավոր ճանաչված Սյունյաց նահանգի ընդհանուր տիրակալ: Այնուհետև Սյունիքն իր հարկերը անմիջապես պիտի մուծեր մոնղոլական արքունիքին, չենթարկվելով տեղական տարբեր իշխողների կամայականություններին: Նա կարողանում է հարկերից ազատել նաև եկեղեցիները: Վերադառնալով Սյունիք, նա Հովհաննեսին գտնում է ծերացած և ասպարեզից մի կողմ քաշված: Վերջինս վանքի վերանորոգման աշխատանքները հանձնել էր իր եղբորորդուն՝ Տեր Հայրապետին, որը և «հրամա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № № Ե—Զ-ից:

[79] Ստ. Օրբելյան, էջ 251:

[80] «Հայ ժող. պատմություն», ՀՍՍՀ ԳԱ, Երևան, հտ.—Գ, 1976 թ., էջ 602:

[81] Ստ. Օրբելյան, էջ 292:

[82] «Հայ ժող. պատմություն», Նշվ. հրատարակութ., էջ 609:

[83] Հ. Մանանդյան, Նշվ. աշխատ., էջ 471:

նաև կնոջ Բաչուին սկսեալ էր շինել զվանքը, և կայր ի նմին ալքատութեամբ. զի յայնքան ժառանգութեանցն որ լեալ էր, ոչ տուն մի անգամ ոչ կայր եկեղեցւոյն»[84]: Սմբատի աջակցությամբ Հովհաննես եպիսկոպոսը շարունակում է Տաթևի վերակառուցումը և ավարտում Պողոս-Պետրոս եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Տեր Հովհաննեսի մահվան թվականը սխալ է նշված Օրբելյանի մոտ: Նախ, գոյություն ունի հակասություն իր իսկ բերած թվականների միջև: Այսպես. մի տեղ գրում է. «Տէր Յովհաննէս կացեալ ամս 38՝ վախճանի ի Նորավանս»[85], իսկ այնուհետև՝ «...և դնի ի գաւթի նորաւկերտ եկեղեցւոյն յ700(–1251) թուականին»[86]: Արդ, եթե Հովհաննեսը մահացել է 1251 թվականին 38 տարի աթոռակալելուց հետո, ապա աթոռակալել է 1213-ին, երբ դեռ կենդանի էր Ստեփանոս Գ-ը, որն, ինչպես տեսանք, մահացել է 1216 թվականին, իսկ Տաթևի բաժանումը տեղի է ունեցել նրա մահից հետո, Սարգիս Ա-ի ժամանակ: Այնուհետև, մի այլ տեղ, խոսելով խանի մոտից Սմբատի վերադարձի մասին, նշում է. «...ծերացեալ էր եպիսկոպոսն տէր Յովհաննէս»[87]: Արդ, Սմբատ Օրբելյանն առաջին անգամ մոնղոլ խանի մոտ եղել է 1251, իսկ երկրորդ անգամ՝ 1256 թվականին[88]: Եթե ընդունելու լինենք, որ վերևում մեջբերված տողը վերաբերում է նույնիսկ առաջին այցելությունից հետո Սմբատի վերադարձին, ապա Սմբատը Սյունիք է վերադարձել երեք տարի հետո, ինչպես և գրում է պատմիչը. «...և յամեաց զամս երեք»[89]: Այսինքն, նա Սյունիք է հասել առնվազն 1254 թվականին: Հովհաննես Ը-ի մահվան թվականը ճշտելու համար փորձենք հետադարձ հաշվարկ կատարել: Օրբելյանն իր «Պատմությունը» գրել է 1299 թվականին[90]: Այդ ժամանակ Տաթևի եպիսկոպոսն էր Տեր Հովհաննես Թ-ը՝ աթոռակալած 3 տարի, այսինքն՝ 1297—1299 թվականներին, նրանից առաջ Տեր Հայրապետն ու Տեր Սողոմոնը միասին աթոռակալել էին 43 տարի, այսինքն՝ 1254—1297 թվականներին: Այս հաշվարկը գալիս է հաստատելու, որ Հովհաննես Ը-ը 1216 թվականից սկսած աթոռակալել է 38 տարի և մահացել է Սմբատի Կարակորումից վերադառնալուց հետո՝ 1254 թվականին: Նրան հաջորդում է Տեր Հայրապետը կամ Հայրապետ Ա-ը:

Իսկ Ամալու Նորավանքում այդ ժամանակ աթոռակալել են Ստեփանոս Դ-ը՝ 20 տարի, և Գրիգոր Զ-ը՝ 1 տարի, որոնց գործունեության մասին, դժբախտաբար, ոչինչ չի պահպանվել ոչ մատենագիրների, և ոչ էլ հիշատակարանների ու վիմական արձանագրությունների մեջ. իսկ սրանց աթոռակալման թվականներին անդրադարձանք վերևում: Ստեփանոս Դ-ի մասին միակ տեղեկությունը պահպանվել է Օրբելյանի մոտ, որը և մեջ ենք բերում ամբողջապես. «Եւ յաջորդէ ի տեղին (Սարգիս Ա-ի) տէր Ստեփանոս, որ և սա գնացեալ ետ մեծ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին՝ վերստին հաստատէ զայն ուխտ յաթոռ եպիսկոպոսաց և զթէմն զոր ունէր՝ զՎայոց ձոր բոլոր և զՆախջաւան և զՇահուկ գաւառովն. և առնու շրջաբերական թուղթ, յորում և էր անագին նզովիւք փակեալ և ամրացուցեալ, զի զկնի ժամանակաց մի՛ ոք իշխեսցէ խախտել»[91]: Նորավանքը որպես առանձին աթոռ վերահաստատելու այս փաստը գալիս է ասելու, որ հակամարտությունն ու անհանդուրժողականությունը երկու Աթոռների միջև առավել սուր բնույթ էր կրել:

Իսկ Տեր Գրիգորի անունը միայն մի անգամ է հիշվում Նորավանքի մի նվիրատվական արձանագրության մեջ՝ որպես առաջնորդի[92]:

Հավանաբար ժամանակի քաղաքական իրավիճակը թույլ չի տվել այս երկու եպիսկոպոսներին որևէ քիչ թե շատ աչքի ընկնող դեր կատարել: Գրիգոր Զ-ին փոխարինած Սարգիս Բ-ի մասին արդեն տեղեկություններ շատ կան, որոնց և կանդրադառնանք հանգամանորեն:

Սարգիս Բ-ը ժամանակակից է Ստ. Օրբելյանին, որն ականատես է եղել նրա եռանդուն գործունեությանը և մեծ գովեստով է պատմում նրա մասին: Սա Ստեփանոս Գ-ի եղբոր՝ Վահրամ Ճգնավորի որդին էր, «այր իմաստուն և արդիւնաւոր և վարդապետ ընտիր և բազմաշխատ, որ և բազում արար արդիւնս ի տանս ի գործս երևելիս, և զարդարեաց զեկեղեցին պատուական սպասուք և առաւել հանդիսացոյց զգերապատուն սուրբ մենաստանն քան զնախ-

[84] Ստ. Օրբելյան, էջ 302:

[85] Նույն տեղը, էջ 252 (Ա. Աբրահամյանը Նորավանքի փոխարեն դրել է Տաթև, միանգամայն ընական տրամաբանությամբ: Տես «Սյունիքի պատմություն», էջ 285):

[86] Նույն տեղը:

[87] Նույն տեղը, էջ 302:

[88] «Հայ ժող. պատմություն», հտ.—Գ, նշվ. հրատ., էջ 977:

[89] Ստ. Օրբելյան, էջ 300

[90] Նույն տեղը, էջ 370:

[91] Նույն տեղը, էջ 264—265:

[92] Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ.—Գ, էջ 213:

նիսն իր»[93]: Արդեն ասացինք, որ 1254 և 1256 թվականներին Կարսկորում կատարած իր այցելությունների շնորհիվ Սմբատ Օրբելյանը կարողացել էր Սյունիքի համար ձեռք բերել բավական նպաստավոր պայմաններ: Այս ժամանակաշրջանին է զուգադիպում և Սարգիս Բ-ի աթոռակալությունը: Սրա աթոռակալման առաջին տարիներից իսկ կատարվում են բազմաթիվ նվիրատվություններ Նորավանքի եկեղեցուն (գյուղեր, այգիներ և այլն): Սակայն շուտով Սյունյաց թեմը կանգնում է մի նոր պառակտման փաստի առաջ: Պողոս Խաղբակյան իշխանը փորձում է իր իշխանության ներքո գտնվող գյուղերն ու եկեղեցիները անջատել Սյունիքի աթոռներից և ստեղծել առանձին եպիսկոպոսություն: Այս նպատակով նա Երնջակ գավառից Հովհաննես անունով մի հոգևորականի ուղարկում է Բարձրբերդցու մոտ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Կոնստանդին Բարձրբերդցին, առանց տեղյակ լինելու Պողոս իշխանի ու Հովհաննեսի նպատակներին, վերջինիս եպիսկոպոս է ձեռնադրում և ուղարկում Սյունիք: Հովհաննեսը հաստատվում է Երնջակում և աշխատում առանձին թեմ ստեղծել, պատճառաբանելով, «եթէ և այս աթոռ է եպիսկոպոսաց, զի գոն աստ գերեզմանք հայրապետաց, որք էին պատահմամբ եկեալ վասն ամրութեան բերդին ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւնեաց և անդ վախճանեալ: Եւ ի թիկունս արարեալ յայլազգեացն հազարապետ մի՝ բռնաբար յաւիշտակեաց զԵրնջակ գաւառ»[94]: Սակայն Սմբատի եղբոր՝ Տարսայիճ Օրբելյանի կարգադրությամբ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսն ու Տաթևից Հովհաննես եպիսկոպոսը[95] ճանապարհվում են Կիլիկիա: Մինչ նրանք տեղ կհասնեին, 1237 թվականին արդեն մահացել էր Կոնստանդին Բարձրբերդցին, և նրան փոխարինել էր Հակոբ Ա Կլայեցին (1268—1286): Վերջինս, լսելով կատարվածի մասին, «հրամայէ գրել թուղթ և անագին նզովիւք կտրէ ի կենաց զեղկելի Յովհաննէս որ յԵրնջակի. և հրահրեաց ասնիծիւք վակէ մի՛ ևս համարձակիլ ունեք ի հերքումն այնր վիճակին»[96]: Նմանապես մեղադրական թուղթ է գրում Պողոս իշխանին, սպառնալով խոտոր ճանապարհից ետ չկանգնելու դեպքում նրան նույնպես նզովել: Վերցնելով Հակոբ Կլայեցու այս գրությունները, երկու աթոռակալները շտապում են Սյունիք և նախ ներկայանում են Պողոսին, որը, նկատելով գործի այսպիսի ընթացքը, ստիպված հրաժարվում է իր մտքից և երդմնագիր է տալիս, որ այլևս նման բան չի խորհի: Այնուհետև Սարգիսն ու Հովհաննեսը շտապում են Երնջակ, ուր և բռնելով ապստամբ աթոռակալին, ցույց են տալիս նզովքի թուղթը, նրան մերկացնում եպիսկոպոսական ու քահանայական հանդերձանքից և որպես նզովվածի՝ վտարում եկեղեցուց: Երնջակի բաժանումը տևել է առնվազն 6 տարի, քանի որ Հովհաննեսը Բարձրբերդցուց պիտի ձեռնադրված լինի ամենաուշը 1267 թվականին, և գահընկեց է արվել Տարսայիճ Օրբելյանի պահանջով, որը, ըստ Գարեգին արքեպս. Հովսեփյանի, Սմբատ Օրբելյանին փոխարինել է 1273 թվականին[97]:

Սարգիս Բ-ի առաջին շինարարական աշխատանքը լինում է 1261 թվականին Նորավանքի Սուրբ Կարապետ եկեղեցու գավթի կառուցումը, օժանդակությամբ Սմբատ Օրբելյանի: Երնջակի Հովհաննես եպիսկոպոսի հետ կապված միջադեպից հետո Սարգիս Բ-ը նոր թափով ձեռնամուխ է լինում շինարարական աշխատանքների: 1273—1290 թվականների ընթացքում նա կառուցում է Ամաղու Նորավանքի հյուրատունը, որի կարիքները հոգալու համար ինքն իսկ կատարում է նվիրատվություններ. «...որ զայսոց մուտքն ի հիւրերին պէտքն անցանեն, որ աւտարքն եւ կարաւտեալքն ուտեն. պարոնացն եւ երախտաւորացն սոլաթք եւ Աստուած ողորմեսաւեն»[98]: Հաջորդ կարևոր շինարարությունը լինում է Նորավանքում Սմբատի դամբարանի կառուցումը 1275 թվականին, Սիրանեշ ճարտարապետի կողմից: Սմբատի դամբարանը կառուցվում է Տարսայիճի պատվերով՝ իր եղբոր՝ Սմբատի գերեզմանի վրա, ուր հետագայում թաղվում է և ինքը՝ Տարսայիճ Օրբելյանը: Սարգիս Բ-ի կարևոր ձեռնարկումներից է լինում նաև Արփա գետի վրա կամուրջի կառուցումը, որի մասին Ստ. Օրբելյանը պատմում է հետևյալ հիացական խոսքերով. «Այս տէր

[93] Ստ. Օրբելյան, էջ 253

[94] Նույն տեղն, էջ 268:

[95] Այս Հովհաննեսին չպետք է շփոթել Հովհաննես Ը-ի հետ, որովհետև նրա աթոռակալման ժամանակամիջոցը չի համապատասխանում Հակոբ կաթողիկոսի գահակալման տարիներին: Սա կամ Հովհաննես Թ-ն է, որն այդ ժամանակ դեռ հանդես էր գալիս որպես փոխանորդ, և կամ էլ Տաթևի թեմերից որևէ մեկի եպիսկոպոսը, ինչպես ենթադրում է Ա. Աբրահամյանը (տես «Սյունիքի պատմություն», էջ 505):

[96] Ստ. Օրբելյան, էջ 269:

[97] Գարեգին արքեպս. Հովսեփյան, «Խաղբակյանը կամ Պողոսյանք հայոց պատմության մեջ», մասն առաջին, Վաղարշապատ, 1928 թ., էջ 96:

[98] Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 246:

Սարգիս, որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ ի Նորավանս՝ ևս առաւել արար գործ մի երևելի, զի ի գիւղն Առփայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ»[99]:

Սարգիս Բ-ը մահացել է 1298 թվականին և թաղվել Ամսուղու Նորավանքում, ուր և մինչև այժմ մնում է նրա տապանաքարը հետևյալ արձանագրությամբ. «Այս շիրիմ շնորհալիր Սարգսի է, Սիւնեաց եպիսկոպոսի եւ անյաղթ հոետորի, թվ. ՉԽԷ (1298)»[100]:

Այժմ նորից անդրադառնալով Տաթևի բաժանված Աթոռին, շարունակենք այդ Աթոռի պատմության հետագա ընթացքը՝ մինչև Ստեփանոս Օրբելյան:

Ինչպես արդեն ասացինք, 1254 թվականին Հովհաննես Ը-ին հաջորդում է Հայրապետ Ա-ը, որը հաջորդ աթոռակալ էր նշանակվել դեռևս Հովհաննեսի կենդանության օրոք և ջանադրաբար օգնում էր իր ծերացած հորեղբորը՝ Տաթևի վերանորոգման աշխատանքները կատարելուն[101]: Հովհաննեսի մահից հետո Հայրապետը Սմբատ և Տարսայիճ Օրբելյանների աջակցությամբ կարողանում է ավարտել Պողոս-Պետրոս եկեղեցու խարխլված պատերի վերանորոգումը: Այս կարևոր շինարարության ավարտման մասին որևէ արձանագրություն չի պահպանվել: Օրբելյանը այս մասին գրում է հետևյալը. «Իսկ Տաթևացիքն շինեցին զվանքն, որ ի բազում (ամաց հետէ) աւեր եւ ամայի մնացեալ էր և փարթամուցուցին ամենայն պիտոյիւքն մեծ և փառաւորեալ իշխանաց իշխանացն Սմբատ և Տարսայիճ»[102]: Միայն 1274 թվականին Տարսայիճ Օրբելյանի կողմից նույն եկեղեցու պատին փորագրված նվիրատվական արձանագրությունից կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակ եկեղեցու վերանորոգումը արդեն ավարտվել էր[103]: Եկեղեցու վերանորոգման ժամանակ, ի դեպ, հայտնաբերվում է փլատակների տակ ծածկված մի գաղտնարանի մուտքը, որտեղից ի հայտ են գալիս «...մթերս անհուն սրբութեանց և նշխարաց առաքելական, հայրապետական և մարտիրոսական, յորում կայր և աստուածընկալ խաչն Բարգեանեան»[104]:

Հայրապետ Ա-ի կարևոր ձեռնարկումներից է լինում Տաթևում կրթական գործի կազմակերպումը: Հավանաբար նույն Հայրապետ եպիսկոպոսն էր այնտեղ դասավանդող ուսուցիչներից մեկը, որի մոտ և սովորելու է ուղարկվում Ստեփանոս Օրբելյանը: Այն, որ այդ ժամանակ Տաթևում դպրոց է գոյություն ունեցել, որոշակիորեն երևում է Ստ. Օրբելյանի հետևյալ տողերից. «...իսկ հոգևոր ծննդեամբ սուրբ աւազանին որդիացեալ տեսուն Հայրապետի՝ եպիսկոպոսի Սիւնեաց. սնեալ և ուսեալ առ ոտս աստուածարեալ արանց. կրթեալ ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան՝ եղէ փսաղտ և անագանոս ի գաւիթս Տեսոնն, կոչեցայ ի դպրութիւն և ի սարկաւագութիւն Աստուծոյ»[105]: Նույն գրքից քաղված մի այլ վկայություն գալիս է լրացնելու և հաստատելու, որ Տաթևում այդ ժամանակ իսկապես դպրոց է գոյություն ունեցել: Խոսելով Սմբատ Օրբելյանի գործունեության մասին, Օրբելյանը գրում է. «Բայց Սմբատ անզաւակ գոլով՝ առեալ զմի յորդւոց եղբօրն Տարսայիճին և որդիացուցեալ ինքեան՝ տայ յուսումն գրոց և ի հրահանգս քահանայութեան»[106]: Օրբելյանի այս երկու հիշատակությունները, ինչպես երևում է, որոշակիորեն լրացնում են միմյանց: Եթե առաջինում հայտնում է, որ ինքը հանձնարարվել է Հայրապետի խնամքին և տարիներ հետո հոգևոր կոչումներ ստացել, ապա երկրորդում հայտնում է, որ իր հորեղբայրը՝ Սմբատը, իրեն տալիս է «յուսումն գրոց»: Դժբախտաբար, ուրիշ որևէ հիշատակություն չունենք այդ ժամանակ Տաթևի դպրոցի վերաբերյալ, սակայն Ստ. Օրբելյանի այս վկայությունները ժխտել կամ անտեսել հնարավոր չէ և կարող ենք վստահորեն ասել, որ Սյունիքում Սմբատ Օրբելյանի ձեռք բերած քաղաքական բարենպաստ վիճակը հնարավորություն է տալիս այստեղ կրոնական ու մշակութային նոր վերազարթոնքի: Այն փաստը, որ Տաթևում մինչ Սմբատ իշխանի մահը՝ 1273 թվականը[107], տեղի Հայրապետ եպիսկոպոսի գլխավորությամբ գործել է դպրոց և Օրբելյանն այդտեղ սովորել է մատենագրություն, կրոնական գրականություն և հ-

---

[99] Ստ. Օրբելյան, էջ 312—314:

[100] Ս. Բարխուդարյան, Նշվ. աշխատ., էջ 231:

[101] Ստ. Օրբելյան, էջ 253:

[102] Նույն տեղը:

[103] Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ.—Բ, էջ 15—16:

[104] Ստ. Օրբելյան, էջ 318:

[105] Նույն տեղը, էջ 349:

[106] Նույն տեղը, էջ 307:

[107] Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ.—Գ, էջ 115:

ռաջշտություն[108], վկայում են այդ դպրոցի որոշակի մակարդակի մասին:

Տեր Հայրապետի ժամանակ Տաթևի Աթոռին հիշվում է և մի այլ եպիսկոպոս՝ Տեր Սողոմոն անունով, որի մասին Օրբելյանը երկու թռուցիկ տեղեկություն ունի.

1) «Եւ առնու զաթոռն եղբօրորդի նորին տէր Հայրապետ և միւս ազգականն տէր Սողոմոն»[109]:

2) «Իսկ Տաթևացիքն շինեցին զվանքն... և ինքեանք կեցեալ ի միասին՝ նախ վախճանի տէր Սողոմոն անդէն, և ապա տէր Հայրապետ»[110]:

Տաթևում երկու եպիսկոպոսների միաժամանակյա աթոռակալությունը, ինչպես արդեն նկատեցինք, բնական երևույթ էր դարձել: Այդ երկու եպիսկոպոսներից մեկը հանդես էր գալիս առաջնորդի, իսկ մյուսը՝ փոխանորդի կամ տեղապահի դերում: Վերջինս սովորաբար հաջորդ առաջնորդն էր դառնում: Սողոմոն եպիսկոպոսի անվանը մի անգամ ևս հանդիպում ենք Օրբելյանի նշած Տաթևի եպիսկոպոսների ցուցակում, ուր հիշվում է և Սողոմոնը՝ Հայրապետի հետ միասին աթոռակալած 20 տարի[111]:

Ավարտելով Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու վերանորոգումը, Հայրապետ Ա-ը «...յետ բազում աւուրց ծերական ալեօք եպիսկոպոսն բարեբարոյ՝ տէր Հայրապետ, յաղթեալ ի սիրոյ Տեառն իւրոյ՝ գնաց ի տեսութիւն աստուածակոխ տեղացն Երուսաղեմի»[112]: Իր ուխտագնացությունն ավարտելուց հետո սակայն, Հայրապետը ոչ թե անմիջապես վերադառնում է Տաթև, այլ նախ այցելում է Կիլիկիա՝ Լևոն Գ-ին (1270—1289): Օրմանյանն այս այցելությունը դնում է 1282 թվականին, հայ-հունական հաշտությունից հետո, երբ այնուհետև Լևոն Գ-ը իր հայացքն ուղղում է Հայաստան և աշխատում կապեր ստեղծել Հայաստանում գոյություն ունեցող իշխանությունների, հատկապես դրանցից ամենահզորի՝ Սյունիքի իշխանության հետ, հեռավոր նպատակ ունենալով Կիլիկիայի թագավորությունը Հայաստանի վրա ևս տարածելու համար, հատկապես, որ մոնղոլական պետության ներսում այդ ժամանակ ծայր էին առել ներքին ընդհարումները[113]: Հավանաբար, Հայրապետ Ա-ը տեղյակ էր Լևոնի այս մտադրությանը և այս պատճառով էլ ուղևորվում է Կիլիկիա: Լևոնը Տաթևի ուխտին է ընծայում «...զգեստ սեղանոյն յարքունական մետաքսից զբիւզանդացին, որ ի Յունաց ճարտարացն անարման կիտուածք, և խաչ պատուական ի սպիտակափայլ և սառնատեսակ քարանց համակ կերպացեալ և պնդեալ յոսկում, և սկիք պատուականք ի զուտ արծաթոյ և այլ բազում պարգևս...»[114]: Լևոն Գ-ը նաև չափածո մի հիշատակարանով հայտնում է Տաթևի ուխտին իր միաբանվելու մասին և Հայրապետի հետ ուղարկում Սյունիք: Այդ չափածո գրվածքում թագավորն իր այս քայլի նպատակն արտահայտել է հետևյալ սեղմ ու բազմիմաստ տողով. «Որպէս զի հաղորդ եղէց ի նմանէ ամենից որ աստ բարութեան»[115]: Վերադառնալով Տաթև, Հայրապետը Զատկի Հարության բոլոր պատարագները կարգում է որպես «յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան»[116]:

Տեր Հայրապետի քահանայության ժամանակ Տաթևի Աթոռն զբաղեցնում էր Տեր Սողոմոնը, սակայն Կիլիկիայից Հայրապետի վերադառնալուց հետո Սողոմոնի փոխարեն հիշվում է Հովհաննես եպիսկոպոսը: Պետք է ենթադրել, որ այդ ընթացքում Սողոմոնը մահացել էր՝ 20 տարի տեղապահի պաշտոն վարելով, և նրան այդ գործում փոխարինել էր Հովհաննեսը, որը Հայրապետի մահից հետո նշանակվում է հաջորդ աթոռակալ: Այս Հովհաննեսը ընդունված է որպես Հովհաննես Թ:

Հայրապետ Ա-ի մահվան տարին Ա. Աբրահամյանը համարում է 1292 թվականը[117], որը, սակայն, ճիշտ չէ: Նախ, վերևում տեղեկացինք Սյունյաց Աթոռների աթոռակալների գործունեության թվականները: Այն, որ Հայրապետը չի մահացել 1292 թվականին, որոշակիորեն երևում է տեր Հովհաննեսի թողած հետևյալ արձանագրությունից. «Յամի յորում էր թվ. ՉԽԴ (1294) ես Տէր Յոհաննէս կամաւն Աստուծոյ եւ աղաւթիւք հոգեւոր հաւր իմոն Տէր Հայրապետա տարա զջուրս Վարարական ի Վարդուտն...»[118]: Ինչպես տեսնում ենք, 1294 թվականին Հայրապետը դեռևս կենդանի էր, քանի որ մահացածի համար չէր գրվի, «աղաւթիւք հոգեւոր հաւր իմոն»: Այս բոլորից բացի, պետք է նկատի ունենալ, որ եթե Օրբելյանն իր աշխատությունն ա-

108 Սյունիքի պատմություն, էջ 7:
109 Ստ. Օրբելյան, էջ 252:
110 Նույն տեղը, էջ 253:
111 Սյունիքի պատմություն, էջ 386:
112 Ստ. Օրբելյան, էջ 318:
113 Մ. Օրմանյան, Նշվ. աշխատ., հտ.—Բ, էջ 1690:
114 Ստ. Օրբելյան, էջ 313:
115 Նույն տեղը:
116 Նույն տեղը, էջ 319:
117 Սյունիքի պատմություն, էջ 495:
118 Ս. Բարխուդարյան, Նշվ. աշխատ., հտ.—Բ, էջ 78:

վարտել է 1299 թվականին և գրում է, որ այդ ժամանակ Հովհաննեսը ապոստոլական է երեք տարի, ապա պարզապես անիմաստ կլիներ չհավատալ կամ կասկածի տակ առնել այս վկայությունը:

Այս բոլորով հանդերձ, պիտի նշենք նաև Հայրապետի ցույց տված ընդդիմությունը Ստ. Օրբելյանի՝ Սյունյաց երկու Աթոռները հոգևոր մեկ իշխանության ներքո միավորելուն: Այս մասին կխոսենք Ստեփանոս Օրբելյանի գործունեությանն անդրադառնալիս:

Տեր Հայրապետին հաջորդում է Հովհաննես Թ-ը, որն է՛լ ավելի թշնամական դիրք է բռնում Ստեփանոս Օրբելյանի նպատակների հանդեպ: Ինչպես երևում է, սա բավական նեղություններ է պատճառել Օրբելյանին: Այսպես մտածելու պատճառն այն է, որ Հովհաննես Թ-ի մասին պատմիչը գրեթե ոչինչ չի ասում, այլ միայն մի քանի տեղ տալիս է նրա անունը, իսկ մահվան մասին խոսելիս (մահացել է 1299 թվականին), հակիրճ ձևով գրում է. «Եւ զի առ կենօք սորին էր ձեռնադրեալ եղբօրորդի նորա՝ Յովհաննէս անուն, յետ սորա կեցեալ բազում հակառակութեամբ ամս երեք՝ վախճանի և դպի ընդ հօրեղբօր յորում տէր Հայրապետի»[119]:

Սյունիքի միացյալ Աթոռների վրա Ստեփանոս Օրբելյանի մետրոպոլիտ նշանակվելուց հետո Տաթևի ու Նորավանքի միջև գժտությունները աստիճանաբար դադարում են: Օրբելյանից սկսած, երբ այդ երկու Աթոռների եպիսկոպոսները հանդես են գալիս Սյունիքի մետրոպոլիտի ընդհանուր իշխանության ներքո, նրանք աստիճանաբար գրավում են երկրորդական տեղ և Սյունիքի կրոնական ու քաղաքական կյանքում սկսում են հանդես գալ Սյունյաց մետրոպոլիտները, որոնց կեցվածքը որևէ հարցի նկատմամբ հաճախ վճռորոշ է լինում ոչ միայն Սյունիքի ներքին կրոնական ու քաղաքական կյանքում, այլև ընդհանրապես Հայաստանում ու Կիլիկիայում:

(Շարունակելի)

---

[119] Ստ. Օրբելյան, էջ 253: